ՀԻՄՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ

«Սուրհանդակի» № 226-ում Եղիշե ա<վագ> ք<ահանա> Գեղամյանը իր «Անհիմն մեղադրանք» նկատողության մեջ, խոսելով իմ հոդվածի մասին պ. Չալխուշյանի առաջարկի դեմ, գտնում է, որ անհիմն եմ մեղադրել Հովհ. Կարբեցի կաթողիկոսին, գրելով թե նա կամեցել է Ներսիսյան դպրոցը սեմինարիայի վերածել՝ նրանում ընդունելով միմիայն հոգևորականացուներ։

Հենց նույն հոդվածում էլ հ<այր> Գեղամյանը ասում է, որ Ներսես Աշտարակեցին էլ է դրել նույն մեղադրանքը Կարբեցու վրա, Ա. Երիցյանն էլ։ Տեր հայրն ասում է, թե ընդհակառակը, Կարբեցին հակառակ է եղել այդ ծրագրին, որ բարոն Ռոզենն է կազմել, թեև դրա համար ոչ մի վկայություն, ոչ մի դոկումենտ չի հիշատակում։ Մինչդեռ այդ դոկումենտները կան։ Ուրիշ անգամ գուցե առիթ լինի ավելի ընդարձակ խոսելու, առայժմ այդ պատմական փաստաթղթերից մի երկու կտոր հանեմ, որ ցույց կտան թե իմ մեղադրանքն անհիմն չի և բարոն Ռոզենն էլ այս խնդրում հակառակ չի եղել Կարբեցուն։ Ահա հատվածները այն գրությունից, որ 1836 թվականի հոկտ. 27-ին № 524, ղրկում է երկրի կառավարչապետ բարոն Ռոզենը ներքին գործերի մինիստր Բլուգովին. «Что касается до существующаго в Тифлисе армянского училища, то **я вполне разделяю мнение патриарха Иоаннеса**[1], чтобы его обратить в здешнюю армянск. Семинарию и т. д. և շարունակության մեջ ասում է, թե դպրոցի համար կտակած ու նվիրած փողերն էլ կգնան «преимущественно для обучения бедных армян из священнического и других сословий, **поступающих в духовное звание»** и. т. д. (Акты собр. Кавк, археогр. комис., т. VIII, стр. 302—3).

Ինչպես տեսնում եք, Հովհ. Կարբեցի կաթողիկոսը առաջարկել է և բարոն Ռոզենն էլ նրա հետ միանգամայն համաձայն է եղել։ Իսկ թե ինչպես վերևը, Պետերբուրգում լիովին չի անցել այս առաջարկը, դա երկար պատմություն է։ Ես միայն կամեցա ցույց

[1] Ընդգծումները մերն են։ Հ. Թ.։

տալ, որ անհիմն չեն եղել իր ժամանակին Ներսես Աշտարակեցու և Ա. Երիցյանի մեղադրանքը։

Բայց ենթադրենք, թե Հովհաննես Կարբեցին այդպիսի առաջարկ չի արել։

Ավելի լավ։ Ուրեմն, դուրս կգա, որ նույնիսկ Հովհ. Կարբեցին էլ չի ասել այն, ինչ որ ասում է պ. Գր. Չալխուշյանը։ Եվ տեր հայրը, որ աշխատում է Հովհ. Կարբեցուն ազատել այդ մեղադրանքից, թե նա այդպիսի առաջարկ չի արել, անպատճառ պետք է մեղադրեր պ. Չալխուշյանին, որ այդպիսի առաջարկ է արել։ Բայց, չգիտեմ ինչու, այդ մասին լռում է ու պ. Լեոյի օձիքն է բռնում, որ այստեղ ոչ մի հանցանք ու մասնակցություն չունի, ասում է՝ նա մթնեցրել ու շփոթել է պատմությունը, մինչդեռ հենց ինքը, հ<այր> Գեղամյանը իր «Պատմական քաղվածքները» գրելիս օգտվել է և պ. Լեոյի պատմական գրվածքներից ու անունն էլ դրել աղբյուրների ցանկում։